



**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՍԲԻՈՆ**

**ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ և ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ  
ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ**

**(առկա ուսուցում)**

**2021-2023թթ.**

**Մագիստրոսի կրթական**

**ծրագրի համառոտ նկարագիր**

## ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Ծրագիրը նպատակ ունի.

- զարգացնելու ուսանողների մասնագիտական կարողությունները՝ տրամադրելով խորացված ուսուցում անձի հոգեբանության բնագավառում՝ հասարակության զարգացման ժամանակակից միտումների համատեքստում անձի կայուն զարգացման հիմնախնդիրները հասկանալու, վերլուծելու և մեկնաբանելու համար,
- տրամադրելու ուսանողներին մասնագիտական այնպիսի գիտելիքներ և կարողություններ, որոնք անհրաժեշտ են հետազոտական, հոգեախտորոշիչ, խորհրդատվական, լուսավորչական և զարգացնող աշխատանք իրականացնելու համար սոցիալ-հոգեբանական աջակցության ծառայությունների շրջանակներում,
- օժանդակելու ուսանողներին՝ զարգացնելու իրենց մասնագիտական գիտելիքները և կարողությունները կրթության, առողջապահության և մասնագիտական գործունեության ոլորտներում՝ հոգեբանական ծառայության կայացմանը նպաստելու համար:

## ԾՐԱԳՐԻ ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՋՆԱԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի.

### Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն

1. սահմանելու անձի հոգեբանության բնագավառի զարգացման պատմամշակութային նախադրյալները, մեթոդաբանական հիմքերը և զարգացման ժամանակակից միտումները,
2. ներկայացնելու անձի հոգեբանության ժամանակակից հոգեբանական մակրո- և միկրոտեսությունները և հայեցակարգերը,
3. բացատրելու անձի տարիքային տարբեր փուլերի զարգացման առանձնահատկությունները, գործընթացները և օրինաչափությունները,
4. հիմնավորելու քանակական և որակական մեթոդների կիրառման համապատասխանությունը հետազոտական նպատակներին,
5. սահմանելու հոգեբանական (անհատական և խմբային) խորհրդատվական աշխատանքի իրականացման սկզբունքները, առանձնահատկությունները և տեսակները,
6. բնութագրելու հոգեբանական աջակցության ծառայության առանձնահատկությունները կրթության, առողջապահության և մասնագիտական գործունեության ոլորտներում:

### Բ. Գործնական մասնագիտական կարողություններ

1. իրականացնելու անձի և զարգացման հոգեբանության ժամանակակից հիմնախնդիրներին վերաբերող ուսումնասիրություններ՝ օգտագործելով արդյունքների վերլուծության որակական և քանակական մեթոդները,
2. վերլուծելու և ներկայացնելու անձի նույնականացման միտումները, վարքաձևերը և համոզմունքների համակարգը ժամանակակից սոցիալ-մշակութային փոփոխությունների համատեքստում,
3. կիրառելու անձի ուսումնասիրման հոգեախտորոշիչ (ինքնագնահատման և պրոյեկտիվ) մեթոդները խորհրդատվական աշխատանքում,

4. իրականացնելու անհատական և խմբային հոգեբանական խորհրդատվական աշխատանք,
5. կիրառելու հոգեբանական խորհրդատվության սկզբունքները կրթական, առողջապահական և սոցիալական ոլորտներում սոցիալ-հոգեբանական աջակցության ծառայություններ կայացնելու ուղղությամբ,
6. իրականացնելու անձնային աճին և ինքնագարգացմանն ուղղված խորհրդատվական և լուսավորչական աշխատանք (psychoeducation) կրթական, առողջական, սոցիալական կարիքների բավարարման և միջավայրում ինտեգրման ուղղությամբ:

**Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ**

1. կիրառելու գիտելիքները պրակտիկայում, ձևակերպելու և լուծելու խնդիրներ,
2. համագործակցելու գործընկերների և հարակից ոլորտի մասնագետների հետ,
3. պատրաստելու զեկուցումներ, ներկայացնելու հետազոտությունների արդյունքները, վարելու գիտական բանավեճեր,
4. պահպանելու մասնագիտական էթիկայի սկզբունքները:

**ԾՐԱԳՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ**

Ընդհանուր առարկաներ (պարտադիր)	Կրեդիտ
Օտար լեզու- 1	6
Օտար լեզու- 2	3
Տեղեկատվական տեխնոլոգիաները մասնագիտական ոլորտում	3
Հետազոտության պլանավորում և մեթոդներ	3
<b>Մասնագիտական առարկաներ (պարտադիր)</b>	
Մասնագիտության արդի հիմնախնդիրները	3
Անձի ժամանակակից տեսություններ	6
Հոգեբանական խորհրդատվության տեսություն և պրակտիկա	6
<b>Մասնագիտացման առարկաներ (կամընտրական)</b>	
Պոզիտիվ խորհրդատվություն և հոգեթերապիա	3
Նարատիվ հոգեբանություն և հոգեթերապիա	3
Հասուն տարիքի հոգեբանություն և խորհրդատվություն	3
Հոգեբանական խորհրդատվության հմտություններ	3
Անձի հոգեախտորոշման մեթոդներ	6
Որակական հետազոտությունները անձի հոգեբանության մեջ	6
<b>Մասնագիտացման առարկաներ (կամընտրական)</b>	
Հոգեսոցիալական վերականգնողական աշխատանք (հոգեկան առողջության ոլորտում)	3
Էքզիստենցիալ հոգեբանություն և հոգեթերապիա	3
Արտ-թերապևտիկ մեթոդները հոգեբանական խորհրդատվությունում	3
Հոգեդինամիկ հոգեթերապիա	3
Ընտանիքի և զույգի խորհրդատվություն և հոգեթերապիա	3
Առողջության հոգեբանություն և խորհրդատվություն	3
Խմբային խորհրդատվության տեսություն և պրակտիկա	6
Հոգեբանական խորհրդատվությունը կրթության ոլորտում	6
Սթրեսի կառավարման տեխնիկաները հոգեբանական խորհրդատվության մեջ	6

## Ծրագրում ներգրավված դասախոսական կազմը

Հարությունյան Սվետլանա	հ.գ.դ., պրոֆեսոր, ծրագրի խորհրդատու
Խաչատրյան Նարինե	հ.գ.թ., դոցենտ
Խանամիրյան Իրինա	հ.գ.թ., դոցենտ
Բաղդասարյան Լիլիթ	հ.գ.թ., դոցենտ
Մանուսյան Սոնա	հ.գ.թ., ասիստենտ
Հակոբջանյան Աննա	ասիստենտ
Գալստյան Ալինա	դասախոս, ավագ գիտաշխատող
Մերոբյան Աստղիկ	դասախոս, կրտսեր գիտաշխատող
Աղաբեկյան Լուսինե	դասախոս
Լիլիթ Մնացականյան	դասախոս

### **Ծրագրի ղեկավար՝ հ.գ.թ., դոցենտ Նարինե Խաչատրյան**

Ամբիոնը համագործակցում է հետևյալ մասնագետների հետ, ովքեր մագիստրոսների համար վարելու են կարճաժամկետ դասընթացներ (տեղում և առցանց) մագիստրոսական ծրագրի շրջանակներում՝

- Քրիստինա Ստեփանյան- հոգեբանության դոկտոր, հոգեթերապևտ, հոգեբան-խորհրդատու (Կանադա)
- Ռիչարդ Բեդրոսյան- հոգեբանության դոկտոր, հոգեթերապևտ (ԱՄՆ)
- Մարինե Պետրոսյան- հոգեբան-խորհրդատու (ԱՄՆ)
- Լիլիթ Գարգրյան- հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ (ԱՄՆ)

### **Պրակտիկայի հնարավորությունները և պայմանները**

Պրակտիկան կազմակերպվում է գիտական ղեկավարի հետ համատեղ կազմված և հաստատված ծրագրով:

Գիտահետազոտական պրակտիկան կարող է անցկացվել ԵՊՀ «Անձ և սոցիալական միջավայր» գ/հ լաբորատորիայում իրականացվող գիտական թեմաների և նախագծերի շրջանակներում, մասնավորապես հետևյալ ծրագրերի շրջանակում

- Անձի ուսումնասիրման մեթոդիկաների հայերեն լեզվով մշակում,
- Անձի ուսումնասիրման միջմշակութային հետազոտություններ:

Մասնագիտական գործնական (խորհրդատվական, հոգեշտկող, հոգեախտորոշիչ) հմտությունների ձևավորմանն ուղղված ուսանողական պրակտիկան հիմնականում կարող է անցկացվել հոգեկան առողջության կենտրոններում և կրթական հաստատություններում:

- ԵՊՀ Կիրառական հոգեբանության կենտրոն,
- Անանիա Շիրակացու անվան կրթահամալիրի հոգեբանական ծառայության կենտրոն,
- “Arpi's Place” նախակրթարան,
- «Այբ» դպրոց,
- Կանանց Ռեսուրսային Կենտրոնը (ԿՌԿՀ)
- Հոգեւոցիալական կարգավորման կենտրոն,
- “Փորձաքննությունների ազգային բյուրո” ՊՈԱԿ:



## Ապագա կարիերայի հնարավորությունները

«Անձի հոգեբանություն և հոգեբանական խորհրդատվություն» ծրագրի շրջանավարտները ինքնուրույն մասնագիտական գործունեության հնարավորություն կունենան այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են՝

1. գիտական ուսումնասիրություններ,
2. հոգեբանության դասավանդում,
3. հոգեախտորոշում, հոգեբանական խորհրդատվություն և աջակցություն առողջապահական, կրթական, մասնագիտական գործունեության և սոցիալական խնամքի ոլորտներում:

Շրջանավարտները կարող են աշխատել հոգեբանական ծառայության կենտրոններում որպես *անհատական կամ խմբային խորհրդատվություն իրականացնող մասնագետներ*, խնամքի և պաշտպանության, ցերեկային կենտրոններում որպես սոցիալական խնամք և հոգեբանական աջակցություն իրականացնող մասնագետներ, բժշկական և վերականգնողական հաստատություններում *հոգեբանական խորհրդատվություն իրականացնող մասնագետներ*, հիմնական և ավագ դպրոցներում որպես *հոգեախտորոշիչ, զարգացնող, հոգեշտկող և աջակցող հոգեբան-մասնագետներ*, բուհերի ռեսուրսային կոնտրոլներում որպես *անհատական խորհրդատուներ*, մասնագիտական կողմնորոշման կենտրոններում որպես *գնահատում և խորհրդատվություն իրականացնող մասնագետներ*, գիտակրթական կենտրոններում որպես *հետազոտողներ*, բիզնես կազմակերպություններում որպես անձնակազմի հետ աշխատող *անհատական խորհրդատուներ*, ինչպես նաև՝ իրականացնել մասնավոր խորհրդատվական աշխատանք:

Ծրագրի շրջանավարտները կարող են շարունակել իրենց ուսումը ԵՊՀ Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի ասպիրանտուրայում:

***Մեր մասին կարող եք տեղեկանալ***

***[Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետ \(ysu.am\)](http://www.facebook.com/PersonalityPsychology/)*** կայքից,

ինչպես նաև մեր ֆեյսբուքյան էջից՝

<https://www.facebook.com/PersonalityPsychology/>

***Կոնտակտներ.***

Հասցե՝ Արուսյան 52ա, 3-րդ հարկ, 320 սենյակ

Հեռ.՝ 060 710 638

Էլ. փոստ՝ [persona@ysu.am](mailto:persona@ysu.am)